

---

---

ՀԱՅԵՐԸ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՄ 1945–1988 ԹԹ.  
ՀԱՅԱԹԱՓՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԲՆԱԶՆՁՄԱՆ  
ԱԴԻԲԵՋԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Մեծ Հայրենականին հաջորդած տասնամյակներին շարունակվեց Նախիջևանի ԻՆՍՏԻՏՈՒՄ-ից հայերին դուրս մղելու քաղաքականությունը, որը տարվում էր Ադրբեջանական ԽՍՀ ղեկավարության կողմից: Երկրամասի հայկական դիմագիծն արմատապես փոխելու համար նախորդող տարիներին կիրառվել էր նախիջևանահայության վերադարձն իրենց նախկին բնակություն վայրեր արգելող քաղաքականություն, որը գուգակցվել էր լքված հայկական բնակավայրերը թուրք-թաթարներով ու հարևան Իրանից վերաբնակիչներ հրավիրելով<sup>1</sup>: Միևնույն ժամանակ, Նախիջևանի հայաբնակ գյուղերն իշխանությունների կողմից միտումնավոր դատապարտվել էին սովամահության, արտագաղթի, ինչի մասին Խորհրդային Հայաստանի կառավարությանը բազմիցս դիմումներ էին հղվել երկրամասի հայությունների կայացուցիչների կողմից:

Դեռևս 1930-ական թվականների վերջին ստալինյան բռնաճնշումների ալիքը հատորեն օգտագործվել էր ադրբեջանական իշխանությունների կողմից հայկական բնակչության նկատմամբ հալածանքների կիրառման ու արտաքսման առումով: Փակվել էին հայկական կրթամշակութային հաստատությունները (գործում էին 30 գյուղական, 4 քաղաքային հայկական դպրոցներ, Նախիջևանի մանկավարժական և բժշկական ուսումնարանների հայկական բաժանմունքները, հայկական թատրոնը), հետապնդվում էին հայազգի գործիչները: Այդ և հետագա տարիներին կիրառված բռնություններին զոհ են գնացել Նախիջևանի ԻՆՍՏԻՏՈՒՄ Գերագույն խորհրդի պատգամավոր Հազարապետ Գրիգորյանը, Նախիջևանի ԻՆՍՏԻՏՈՒՄ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Մնացական Մինասյանը, Շահբուլադի (Շահկերտի) շրջկոմի առաջին քարտուղար Մամիկոն Հովակիմյանը, պետական և կուսակցական գործիչներ Հովհաննես Գրիգորյանը, Նորիկ Գրիգորյանը և ուրիշներ: Ստալինյան բռնաճնշումների հետպատերազմյան ալիքի վրա ադրբեջանահայերի (անկասկած՝ նաև նախիջևանահայերի), նոր հալածանքներ են սկսվել 1948–

---

<sup>1</sup> В. Иванов. Деарменизация Нахиджевана XX в. (сжатый обзор). – Нахиджеван в XX – начале XXI веков: некоторые факты. Сб. статей под ред. В. А. Захарова. М., 2011, с. 43.

1949 թթ. և նրանց որպես «ժողովրդի թշնամի» աքսորել են Սիբիր<sup>2</sup>: Հայկական բնակչությանը հայրենի օջախներից արմատախիլ անելու քաղաքականության նոր դրսևորում էին 1950-ական թվականների հալածանքները, որոնց արդյունքում դատարկվեցին Աստապատ, Երնջակ, Լենինաբադ գյուղերի, Նախիջևան ու Ջուլֆա (Ջուղա) քաղաքների հայության մեծ մասը:

Նախիջևանի իշխանությունները կանխամտածված խոչընդոտում էին Հայաստանի հետ մշակութային կապերը, չէին բաժանորդագրում հայկական պարբերականները: Հայաստանի կառավարությունը, ինչպես հարկն է, չկարողացավ սատարել նախիջևանահայությանը, ապահովել մանկավարժական, բժշկական ու մշակույթի բնագավառների մասնագետներով, միջամտել ու կասեցնել հայաթափությունը, մշակութային արժեքների ոչնչացումը: Եզակի բացառություն էր ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար Յա. Ջարոբյանի կարգադրությամբ ամենախոշոր հայկական գյուղի՝ Ազնաբերդի հետ Երևանի մշտական ավտոբուսային երթուղու հաստատումը, որը մեծապես նպաստել է բնակավայրի գոյատևմանը<sup>3</sup>:

1960 թ. սկսած երկրամասի կոմկուսի շրջկոմներն առավելապես հայկական բնակչությանը գյուղերի վրա դրեցին գյուղատնտեսական առաջադրանքների մեծ մասը, աշխատանքից հեռացվում էին հեղինակություն վայելող հայազգի ղեկավար կադրերը: Այսպես, Գյումուր և Առինջ գյուղերի կոլտնտեսությունների նախագահներին աշխատանքից հեռացնելուց հետո ինչպես այդ գյուղերի, այնպես էլ Բաբունքի, Ղարաբաբայի, Օցուպի, Բաղամյուլի, Նորսի, Շահապոնք ու Շահբուզ շրջկենտրոնների հուսալքված հայությունը սկսեց գաղթել Հայաստան: Այն բանից հետո, երբ հայերը լքեցին իրենց բնակավայրերը, աղբբեղանցիները գավթեցին նրանց տներն ու այգիները: Այս գաղթին հետևեցին Ջուղայի շրջանի Շոռոթ, Փարազաշտ և Գյակ գյուղերի հայ բնակչությունը: Աստապատ գյուղի հայաթափումը սկիզբ է առել Արաքս գետի վրա ՀԵԿ կառուցելու՝ ԽՍՀՄ-ի և Իրանի միջև 1963 թ. հուլիսին կնքված պայմանագրով. «...այդ օրից գյուղի դպրոցի հայկական բաժինը սկսեց աստիճանաբար նվազել և սկիզբ առավ հայերի զանգվածային գաղթ դեպի Հայաստան և այլ վայրեր: 1968 թ. տարրական դասարաններում կային 3–5 աշակերտներ, իսկ 1971 թ. հոկտեմբերի 19-ին Աստապատի դպրոցի վերջին զանգը հնչեց...»<sup>4</sup>: Աստապատի պատմաճարտարապետական հուշարձանները, բնակելի տները և դպրոցը մնացել են ջրի տակ, փրկվել են միայն գերեզմանատունն ու Կարմիր վանքը, իսկ հայությունը որոշ ժամանակ անց տեղափոխվել է հարևան Բա-

<sup>2</sup> Л. Мелик-Шахназаров, А. Хачатрян. Этнополитика Азербайджана. Ереван, 2007, с. 24.

<sup>3</sup> А. Варданян. Исход армян из Нахиджевана. — <http://hayasanews.com/1341125854/#sthash.scu0seow.dpuf>

<sup>4</sup> Պ. Պողոսյան. Աստապատ. արաքսամերձ հայաշխարհ, Երևան, 2005, էջ 52:

բեկ ավան, որն էլ վերջնականապես հայաթափվել է 1989 թ. դեկտեմբերին:

Նախիջևանի երկրամասի հայ բնակչության թվաքանակն անշեղորեն անկում ապրեց հետագա տարիներին նույնպես և արդյունքում «ապահովվեց» ադրբեջանցիների էթնիկ գերակշռությունը երկրամասում:

Նախիջևանի հայկական հետքը իսպառ վերացնելուն էր ուղղված նաև երկրամասի իրավական փաստաթղթերից ու խորհրդանիշերից հայերի գոյությունը վերաբերող բոլոր տեսակի սրբազրումները: Այսպես, մինչև 1937 թ. Նախիջևանի ԻԽՍՀ դրոշի և զինանշանի վրա առկա էր գրություն ադրբեջաներեն և հայերեն լեզուներով<sup>5</sup>, սակայն երկրամասի Սահմանադրության մեջ 1938 թ. հուլիսի 25-ի և 1939 թ. հուլիսի 28-ի համապատասխան «շտկումներից» հետո դրոշի հայերեն գրությունն անհետացավ: Նախիջևանում հայութայան հիմնավոր ներկայությունը վկայակոչող մեկ այլ փաստ էր Սահմանադրության 7-րդ գլխի («Դատարան և դատախազություն») 78-րդ հոդվածը, ուր ասվում էր. «Նախիջևանի ԻԽՍՀ-ում դատավարությունը վարվում է ադրբեջաներեն լեզվով, իսկ գերակշռող հայ բնակչություն ունեցող գյուղերում և ավաններում՝ հայերեն լեզվով»: Արդեն 1978 թ. Սահմանադրության 150-րդ հոդվածով լրոգված նշվում էր՝ «Նախիջևանի ԻԽՍՀ-ում դատավարությունը իրականացվում է ադրբեջաներեն լեզվով կամ տվյալ վայրի բնակչության մեծամասնության լեզվով»<sup>6</sup>, այս կերպ դուրս մղելով հայերենը և անտեսելով տեղաբնիկ հայ բնակչության իրավունքները:

1937 թ. մարտի 14-ին Համաադրբեջանական Խորհուրդների IX Արտակարգ համագումարում ընդունված Ադրբեջանական ԽՍՀ Սահմանադրության հոդված 66-ում ասվում էր. «Նախիջևանի ԻԽՍՀ Գերագույն Խորհրդի ընդունած օրենքները, Նախիջևանի ԻԽՍՀ Մինիստրների Խորհրդի որոշումներն ու կարգադրությունները հրապարակվում են ադրբեջաներեն և հայերեն լեզուներով»:

1937 թ. սեպտեմբերի 18-ին Նախիջևանի ԻԽՍՀ Խորհուրդների Արտակարգ X համագումարում ընդունված Նախիջևանի ԻԽՍՀ Սահմանադրության հոդված 111-ում էլ նշվում էր. «Նախիջևանի Ինքնավար Խորհրդային Հանրապետության պետական զինանշան հանդիսանում է Ադրբեջանական ԽՍՀ պետական զինանշանը, որը բաղկացած է մուրճից ու մանգաղից, առջևի պլանում պատկերված նավթային աշտարակից, հետին պլանում ծագող արևի տեսքով և շրջանակված բամբակի ու հասկերի պսակից «Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն» և «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» ադրբեջաներեն ու հայերեն լեզուներով գրությամբ, զինանշանի վերևում հնգաթև աստղից, ներքևում

<sup>5</sup> В. А. Поцелуев. Гербы Союза ССР: из истории разработки. М., 1987, с.138.

<sup>6</sup> В. Иванов. Նշվ. աշխ., էջ 49:

ժապավենի վրա ավելի փոքր տառերով «Նախիջևանի ԻԽՍՀ» ադրբեջաներեն և հայերեն լեզուներով գրուեցին»:

*Հոգված 112-ում կարգում ենք.* «Նախիջևանի Ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության պետական դրոշ հանդիսանում է Ադրբեջանական ԽՍՀ դրոշը, բաղկացած կարմիր կտորից, որի ձախ անկյունում, դրոշակաձողի վերևում, տեղադրված են ոսկե մուրճ ու մանգաղ և գրուեցին ադրբեջաներեն և հայերեն լեզուներով «Ադրբեջանական ԽՍՀ», որի ներքևում, ավելի փոքր տառերով գրուեցին «Նախիջևանի ԻԽՍՀ», ադրբեջաներեն և հայերեն լեզուներով»<sup>7</sup>:



Նախիջևանի ԻԽՍՀ զինանշանը:



Նախիջևանի ԻԽՍՀ դրոշը:

Նախիջևանի ԻԽՍՀ-ն և ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ վերամիավորելու խնդրով Հայաստանի իշխանություններն ու հասարակությունը բազում դիմումներ են հղել միութենական ու կուսակցական մարմիններին: ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար Գ. Հարությունյանը 1945 թ. նամակով դիմել է Ի. Ստալինին հիշյալ հայկական երկրամասերի վերամիավորման խնդրով, որի լուծման կարևորությունը պատճառաբանում էր այն հանգամանքով, որ Ադրբեջանի կազմում այդ երկրամասերի զարգացման հնարավորությունները բավարար չէին օգտագործվում<sup>8</sup>: 1966 թ. սեպտեմբերին ԽՄԿԿ Կենտկոմի հանձնարարությամբ քննարկվել է Հայկական ԽՍՀ գիտություն և մշակույթի մի խումբ գործիչների՝ ԽՄԿԿ XXIII համա-

<sup>7</sup> Съезды Советов Союза ССР, союзных и автономных Советских социалистических республик, 1917—1937 гг.: сборник документов /Институт права (Академия наук СССР). Т. 6. М., 1964. Съезды Советов союзных и автономных Советских социалистических республик Закавказья, 1923—1937 гг.: сборник документов, с. 359—360. Источник: архив А. Я. Лукши (Латвия), архив «Геральдикума», www.heraldicum.ru

<sup>8</sup> Հ. Ավետիսյան և ուրիշներ. Գրիգոր Հարությունյան: Կյանքը և գործունեությունը, Երևան, 2000, էջ 115—116:

գումարին հասցեագրած նամակը, որում բարձրացվում էր ԼՂ-ն ու Նախիջևանի ԻԽՍՀ-ն Հայկական ԽՍՀ-ին վերադարձնելու հարցը<sup>9</sup>: Ուսումնասիրելով և վերլուծելով նամակի բովանդակությունը, ստեղծված իրավիճակը՝ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Քոչինյանի և ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Բ. Մուրադյանի անունից ԽՄԿԿ ԿԿ-ին տեղեկացվել է, որ այդ հարցը չվճռելը լուրջ դժվարություններ է ստեղծում կուսակցական մարմինների



Նախիջևանի ԻԽՍՀ-ի և ԼՂԻՄ-ի վարչական սահմանները  
խորհրդային տարիներին:

գործունեություն և հանրապետության բնակչության լայն խավերի շրջանում քաղաքական դաստիարակչական աշխատանքների իրականացման համար. «Մեր կարծիքով, նպատակահարմար կլինեք քննարկել և դրական լուծել Նախիջևանը և Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ-ին հանձնելու հարցը, ընդամին, Նախիջևանի ԻԽՍՀ-ն կարող է իր ինքնավարությունը պահպանել Հայկական ԽՍՀ կազմում, որի տարածքում էլ գտնվում է: Սակայն, եթե ներկա փուլում Հայկական ԽՍՀ-ին Նախիջևանի վերադարձնելը կապված է հայտնի բարդությունների հետ, ապա Հայկական ԽՍՀ-ին Լեռնային

<sup>9</sup> Հայություն պայքարը ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Կազմողներ և խմբագիրներ՝ Կ. Խաչատրյան, Հ. Աբրահամյան, Երևան, 2011, էջ 61–74:

Ղարաբաղի վերադարձները չի կապված որևէ դժվարությունների հետ և կարող է իրականացվել անցավազին»<sup>10</sup>:



Հայաստանի Հանրապետության, ԼՂՀ և Նախիջևանի սահմանները  
հետխորհրդային տարիներին:

Նախիջևանի ԻԽՍՀ իշխանությունները, երկրամասից հայ բնակչությանը դուրս մղելուն զուգահեռ, իրագործել են հայկական պատմամշակութային ժառանգության նպատակային ոչնչացում: Ադրբեջանի ԽՍՀ տարածքում գտնվող հայկական պատմամշակութային հուշարձանների և եկեղեցիների պահպանության, ավերածություններից փրկելու ու դրանց վերաբացման խնդրով Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն հանդես է եկել դիմումներով, որոնք ուղղված էին ինչպես Հայաստանի, այնպես էլ՝ միութենական իշխանություններին:

ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի Նախագահ Ն. Ա. Բուլգանինին հասցեագրած նամակում (1956 թ. մայիսի 12) Վազգեն Ա-ն նշում էր, որ գործող եկեղեցի չկա Նախիջևանի երկրամասի հայ բնակչության շրջանում, ավելին՝ հարցադրում էր կատարում՝ արդյոք ժամանակը չէր ԼՂԻՄ-ի, Նախիջևանի ԻԽՍՀ և Ախալբալակի շրջանի հարցի արդար լուծման համար, որոնք շարունակում են դուրս մնալ Հայկական ԽՍՀ սահմաններից: 1957 թ. սեպտեմբերին հովվապետական այց կատարելով Ադրբեջանական ԽՍՀ՝ Վազգեն Ա-ն բարձրացրել է հայկական եկեղեցիները սբ. Էջմիածնին վերադարձնելու և վերանորոգման հարցերը: Այցի ավարտին կաթողիկոսը Ադր-

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 74:

բեջանական ԽՍՀ Մինիստրների Խորհրդին առընթեր Կրոնի Պետական Գործերի Խորհրդի լիազոր Մ. Մամեդովին է փոխանցել հայկական եկեղեցիների ու վանքերի ցանկը, այդ թվում՝ Նախիջևանում, դրանք վերաբացելու համար կառավարության առաջ միջնորդություն կատարելու նպատակով<sup>11</sup>: 1958 թ. Վազգեն Ա-ն նամակով դիմել է նաև ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդի Նախագահ Ն. Խրուշչևովին, ուր, ի թիվս այլ հարցերի, նշում էր. «Սրտի խոր ցաւով Մենք պէտք է հաստատենք, որ կայ չափազանց կարևոր խնդիր մը, որն իր լուծումը բաւարար չափով չէ ստացած առ այսօր: Այն հայ եկեղեցիներու բացման հարցն է...: Մինչդեռ Հիւսիսային Կովկասի, Վրաստանի, Ատրպէյճանի, Ղարաբաղի եւ Նախիջևանի մէջ առ այսօր որեւէ մէկ եկեղեցի եւ վանք չէ բացուած... Բոլորին յայտնի է, որ Հայաստանի եւ հարեւան հանրապետութեանց մէջ նախապէս հազարէ աւելի եկեղեցիներ գործած են: Մեր այսօրուան պահանջը անհամեմատ փոքր է, նուազագոյնէն ալ պակաս...»<sup>12</sup>: Ուշագրավ է Վազգեն Ա-ի՝ 1958 թ. օգոստոսի 26-ի բողոքագիրն ուղղված Հայ Եկեղեցու Գործերի Խորհրդի նախագահ Ս. Գասպարյանին, ուր մտահոգություն և հիասթափություն է արտահայտել Ադրբեջանական ԽՍՀ-ում հայկական եկեղեցիների շարունակվող անմխիթար վիճակի առնչությամբ<sup>13</sup>: Հիշյալ նամակում Վազգեն Ա-ն հանգամանալիորեն անդրադարձ է կատարել Նախիջևանի ԻԽՍՀ տարածքում (Նախիջևան, Վերին Ագուլիս, Օրդուբադ, Աբրահունիս և այլն) հայկական պատմամշակութային հուշարձանների, եկեղեցիների ոչնչացմանն ու անմխիթար վիճակին: Վազգեն Ա-ն հույս էր հայտնում, որ ՀԵԳԽ-ի նախագահը նամակի բովանդակության մասին տեղյակ կպահեր Հայաստանի և միութենական պատկան մարմիններին:

Վազգեն Ա-ն իր բողոքն է արտահայտել Ադրբեջանում թափ հավաքած հակահայ քաղաքականության դեմ. «1950–1960-ական թվականներին, երբ խորհրդային տերությունն այլևս հրաժարվել էր պաշտամունքային հուշարձանների դեմ իրականացված կույր պայքարից, Ադրբեջանում պետական հովանավորությամբ շարունակվում էր քրիստոնեական ծագում ունեցող հայկական միջնադարյան հուշարձանների (վանքեր, եկեղեցիներ, մատուռներ և խաչքարերով գերեզմաններ) զանգվածային ջարդարարությունը»<sup>14</sup>:

Հայկական ԽՍՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության ընկերության ջանքերով ձեռնարկվել է Նախիջևանի ԻԽՍՀ տարածքի հայկական պատմամշակութային հուշարձանների հաշվառման, դրանց գիտական ու համահավաք ցուցակների և հարցակարգի կազմման, հրատարակման գործը, որը, մատենագիտա-

<sup>11</sup> Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 823, ց. 3, դ. 129, թթ. 35–41:

<sup>12</sup> Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան: Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա (1955–1994 թթ.): Փաստաթղթերի և նիւթերի ժողովածու, գիրք ԺԶ (16-րդ), կազմող՝ Գ. Եազըճեան, Երևան, 2008, էջ 672–673:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 680:

<sup>14</sup> Հայկական հուշարձանների վիճակը Ադրբեջանում. – «Վարձք» (Երևան), դեկտեմբեր 2010 – ապրիլ 2011, էջ 3:

կան ու աղբյուրագիտական ուղենիշի դեր ունենալով հանդերձ, դառնալու էր հայ ժողովրդի այս հատվածի ստեղծած մշակութային ժառանգության վկայագիրը: Այդ աշխատանքների արդյունքում 1970–1980-ական թվականներին հրատարակվել են Ա. Այվազյանի արժեքավոր աշխատությունները՝ նվիրված Զուղային, Ագուլիսին, Նախիջևանի ԻԽՍՀ հայկական ճարտարապետությանը, հայկական հուշարձաններին ու դրանց համահավաք ցուցակին: Վերջինն իր ընդգրկումով ու նկարագրությամբ Նախիջևանի ԻԽՍՀ տարածքի հուշարձանների առաջին գիտական ցուցակ-փաստաթուղթն էր և կարևոր նշանակություն ուներ նկարագրվող հուշարձանների հետագա ուսումնասիրության գործում՝ Նախիջևանի ճարտարապետական, հնագիտական, պատմական ժառանգությամբ զբաղվողների և այդ ժառանգության պահպանությամբ շահագրգռված կազմակերպությունների աշխատանքները դյուրացնելու համար<sup>15</sup>:

Նախիջևանի նյութական մշակույթը նախորդ սերունդների ազգային ինքնատիպությամբ օժտված մշակութային, քաղաքական ու սոցիալական գործունեության, անցած պատմական ուղու բացահայտումն էին, հուշարձաններ, որոնց թիվն անցնում էր 4500 միավորից<sup>16</sup>:

Նախիջևանում իրականացված հետազոտական աշխատանքները օրախնդիր անհրաժեշտություն էին, քանի որ երկրամասի հայկական բազմադարյա մշակութային ժառանգությունը՝ կանգուն, կիսավեր, թե ավերակ վիճակում, պերճախոս ու ամենահավաստի վկայությունն էին անցած հազարամյակներում այստեղ ապրած ստեղծագործ ժողովրդի ու նրա պատմական ճակատագրի. «Բազմազան են այդ ժառանգության հուշարձանները՝ հնագիտական նյութեր, աշխարհիկ ու հոգևոր շինություններ, ավաններ ու դաստակերտներ... Եվ ամեն մի հուշարձանի ճակատին, շինվածքների որմերին, կործանման ենթարկված գերեզմանատների տապանաքարերի ու խաչքարերի վրա՝ ժողովրդի ու երկրի հազարամյակների պատմության, պայքարի ու տքնության դաջվածք դրոշմներ, մեսրոպատառ վիմագրեր, որմնաքանդակներ, զարդաքանդակներ, բարեխոսության աղերսանք ու անեծք, հուշ ու հիշատակ...»<sup>17</sup>:

Նախիջևանի ԻԽՍՀ հայկական հուշարձանների հետազոտողների գնահատականներից միանշանակ ակնհայտ է, որ երկրամասի հայկական պատմամշակութային հուշարձանների ոչնչացման քաղաքականությունն Ադրբեջանում նոր ծավալներ է ընդունել 1960–1980-ական թվականներին, երբ քաղաքական դրդապատճառներով Ադրբեջանի հակագիտական պատմագրությունը հանրապետության տարածքի հայկական հուշարձանները փորձել է սեփականացնել, «ո-

<sup>15</sup> Ա. Այվազյան. Նախիջևանի ԻՍՍՀ հայկական հուշարձանները (համահավաք ցուցակ), Երևան, 1986, էջ 4–5:

<sup>16</sup> Ա. Այվազյան. Նախիջևան. գիրք հուշարձանաց, Երևան, 1990, էջ 8:

<sup>17</sup> Ա. Այվազյան. Նախիջևանի ԻՍՍՀ հայկական հուշարձանները (համահավաք ցուցակ), էջ 5:



րակել» աղվանական<sup>18</sup>, որոնց հետագա ոչնչացումն ու յուրացումը շարունակվել է նաև հետխորհրդային տարիներին: Այս համատեքստում կարևոր է մեջբերել Հայկական ԽՍՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության ընկերության արչավախմբի արձանագրած իրողությունները երկրամասի հուշարձանները հաշվառելիս. «...գտնում ենք, որ ավելորդ է Նախիջևանի Հայկական հուշարձանների կորստի չափի ու քանակի մասին վկայակոչել գոյություն ունեցող բազմաթիվ հեղինակավոր ու վստահելի աղբյուրներ, հարկ ենք համարում ընդգծելու, որ մխիթարական չէ նաև այդ հուշարձանների այսօրվա վիճակը: Ամբողջ երկրամասի շատ ու շատ բնակավայրերում և նրանց մերձակայքում դեռևս չարագործ ձեռքերը ավերակների են վերածում հուշարձաններն ու հուշարձանախմբերը, տեղահան են անում կամ կոտորում, ձորերն ի վար են գլորում խաչքարերն ու տապանաքարերը, զանազան հնագիտական բեկորները, անտարբերություն են ցուցաբերում պետական օրենքով պահպանվող ու գնահատվող հուշարձանների նկատմամբ: Այնուամենայնիվ, մի շարք հուշարձանների արդեն ավերված ու քայքայված վիճակները և առ այսօր նրանց չուսումնասիրված-չարձանագրված լինելն ու այլ հանգամանքները, հակառակ մեր պրպտումների, անհնար են դարձրել սպառիչ պատասխաններ տալու հարցա-կարգի բոլոր հարցերին»<sup>19</sup>:



Նախիջևանի հայկական հուշարձանները:

չարելու համար: Նախիջևանում շինարարություն իրականացնելու պատրվակով 1975 թ. ավերվել է նաև VII դարում կառուցված Սբ.

1971 թ. Հայրենական Մեծ պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշարձան կառուցելու համար «ընտրվեց» Նախիջևան քաղաքի Հայկական գերեզմանատունը: Այն թաղվեց հողի, ավազի և շինարարական աղբի կույտերի տակ, իսկ տապանաքարերի մի մասն էլ օգտագործվեց հանրապետական հիվանդանոցի պատերը

<sup>18</sup> Տե՛ս В. А. Шнирельман. Войны памяти: мифы, идентичность и политика в Закавказье. М., 2003, с. 201 – 216.

<sup>19</sup> Ա. Այվազյան. Նախիջևանի ԻՍՍՀ Հայկական հուշարձանների (համա-հավաք ցուցակ), էջ 6:

Երրորդություն հայկական եկեղեցին<sup>20</sup>, իսկ 1986 թ. Օցուպի Սբ. Ստեփանոս եկեղեցու ավերումն արագացնելու համար այստեղից պոկել են հսկայական քարեր, Ցղնա գյուղի եկեղեցին վերածվել է թունաքիմիկատների և պարարտանյութերի պահեստի, Ագուլիսի հոյակերտ եկեղեցիները՝ փարախների ու գոմերի: Պայթեցման եղանակով հիմքից ավերվել են Աբրահուկիսի, Շոռոթի և Մեծոփի (Բաղամլուի Սբ. Աստավածածին) եկեղեցիները:

1987 թ. հոկտեմբերին Նախիջևանի իշխանությունների ցուցումով ավերվել է Ագուլիսի հայկական գերեզմանոցը, նրա միջնադարյան մոտ 400 տապանաքարերը՝ ազգագրական կարևոր արժեք ներկայացնող ավելի քան 100 արձանագրություններով: Հայկական պատմամշակութային արժեքների ոչնչացման քաղաքանության գոհ գնացին բազմաթիվ այլ հուշարձաններ: Տարիներ շարունակ Հին Ջուղայի հուշակավոր խաչքարերն անարգել տեղափոխվում և օգտագործվում էին որպես կենցաղային շինանյութ, իսկ Նախիջևանի պատմության պետական թանգարանի մուտքի մոտ տեղադրված Ջուղայի գերեզմանատնից գողացված խոյածե տապանաքարի վրայից քերվել են հայերեն արձանագրությունները, որը պետական մակարդակի հակահայ քաղաքականության, վանդալիզմի և մշակութային յուրացման ակնհայտ դրսևորում էր<sup>21</sup>: Հետխորհրդային տարիներին արդեն անկախ Ադրբեյջանի կողմից շարունակվեց ու նոր թափ հավաքեց հայկական մշակութային եղեռնը, որի դրսևորումներից էր Հին Ջուղայի հուշակավոր հայկական գերեզմանատան հազարավոր ժանեկահյուս խաչքարերի վերջնական ոչնչացումը: Ջուղայի խաչքարերի բարբարոսական ոչնչացման դեմ Հայաստանի պատկան մարմիններից բացի, միջազգային կառույցներին ուղղված դիմումներով է հանդես եկել նաև Նախիջևանահայոց Ազգային խորհուրդը<sup>22</sup>:

Հետստալինյան համամիութենական մարդահամարների արդյունքներով 1959 թ. Նախիջևանի ԻԽՍՀ-ում բնակվում էին 9.519 (Նախիջևանի ԻԽՍՀ բնակչության 6.7 %-ը)<sup>23</sup>, 1970 թ.՝ 5.828 (2.9 %)<sup>24</sup>, 1979 թ.՝ 3.406 (1.42 %)<sup>25</sup> հայեր: Ընդհանուր առմամբ,

<sup>20</sup> Վ. Իվանով. Էթնոքաղաքական և էթնոսոցիոլոգիական գործընթացները Նախիջևանում պատմության լուսի ներքո (XVII–XX դարեր). – Նախիջևան. պատմական և արդի շրջանի որոշ հիմնահարցեր: Վերլուծական նյութեր, ՔՀԻ, թող. 4, Երևան, 2010, էջ 113:

<sup>21</sup> А. Варданян. Նշվ. աշխ.:

<sup>22</sup> «Նախիջևան» (Երևան), թիվ 1 (28), 2005 (սեպտեմբեր), էջ 14, թիվ 2 (29), 2006 (հուլիս), էջ 16–21:

<sup>23</sup> Итоги Всесоюзной переписи населения 1959 года. Азербайджанская ССР. М., 1963, с. 140.

<sup>24</sup> Итоги Всесоюзной переписи населения 1970 года. Т. IV. Национальный состав населения СССР, союзных и автономных республик, краев, областей и национальных округов. М., 1973, с. 19.

<sup>25</sup> Численность и состав населения СССР. По данным Всесоюзной переписи населения 1979 года. М., 1984, с. 126.

1926–1979 թթ. Նախիջևանի ԻԽՍՀ արդրեթանական բնակչութ-  
յունն աճել էր 2.6 անգամ, իսկ հայ բնակչությունը նվազել 3.3 ան-  
գամ<sup>26</sup>, իսկ մինչխորհրդային շրջանի հայկական 44 գյուղերից մնա-  
ցել էին մի քանիսը:

1988 թ. դրույթյամբ նախիջևանահայերի թվաքանակը Նա-  
խիջևանի ԻԽՍՀ-ում չէր գերազանցում բնակչության մոտ 1.5 %-ը,  
[թեև 1989 թ. Համամիութենական մարդահամարով նշվում է 1906  
հայ (0,65 %), երբ երկրամասում արդեն հայ չէր մնացել], որոնք  
ցաքուցրիվ բնակվում էին քաղաքներում և պատմական Գողթան  
գավառի գյուղերում (Յղնա, Փառակա, Բիստ, Վերին Ազա, Դեր,  
Ռամիս, Տանակերտ, Ալահի, Մեսրոպավան): Փաստացի, նախիջևա-  
նահայերի համախումբ բնակչության վերջին հենակետն Ազնաբերդն  
էր իր 450 ընտանիքներով (մոտ 2000 մարդ կամ Նախիջևանի ԻԽՍՀ  
բնակչության մոտ մեկ տոկոսը), իսկ մնացյալ կես տոկոսը կամ 1200  
հայերը բնակվում էին վերոհիշյալ գյուղերում, ինչպես նաև՝ Նա-  
խիջևան ու Ջուլֆա քաղաքներում<sup>27</sup>:

ԽՍՀՄ փլուզման շեմին Ադրբեջանական ԽՍՀ-ում աճող հակա-  
հայկական ալիքն ու ջարդարարությունը տեղ գտավ նաև Նա-  
խիջևանի ԻԽՍՀ-ում: Հայության վերջնական տեղահանությունն ի-  
րագործվեց 1988 թ. նոյեմբերի 22-ին, երբ Նախիջևանի կենտրոնում  
կազմակերպված հակահայկական հանրահավաքից հետո մոլեռանդ  
ամբոխը ջարդեց մարզկոմի դռներն ու պատուհանները, այրեց խոր-  
հրդային բանակի երկու հրասայլ, ապա ցրվեց քաղաքով հայերի  
նկատմամբ հաշվեհարդար սկսելու համար: Ուշացումով հայտարար-  
վեց արտակարգ դրույթուն, սակայն արդեն՝ քաղաքի վերջին 122  
հայ ընտանիքները հեռացել էին:

Համանման զարգացումների հետևանքով նույն բախտին արժա-  
նացան նաև երկրամասի մնացած հայկական բնակավայրերը: Նա-  
խիջևանի ԻԽՍՀ տարածքում կազմակերպված ինքնապաշտպանութ-  
յուն իրականացրեց միայն Ազնաբերդը, որը, փաստացի ամիսներ  
շարունակ օղակված մնալով, դիմակայեց մինչև 1988 թ. դեկտեմբե-  
րը: Ազնաբերդցիները հետ մղեցին գյուղը գրավելու ադրբեջանա-  
կան մերձակա գյուղերի զինված խառնամբոխի փորձերը՝ վերջիննե-  
րիս պատճառելով մարդկային կորուստներ<sup>28</sup>: Խորհրդային բանակի  
ադրբեջանամետ կեցվածքը, Հայաստանից օգնություն ակնկալելու  
հնարավորության բացակայությունը, Սպիտակի աղետալի երկրա-  
շարժը և այլ պատճառների առկայությամբ պայմանավորված՝ ազ-  
նաբերդցիները ստիպված էին նոյեմբեր-դեկտեմբերին լքել հայրենի  
օջախը: Նախիջևանահայերի վերջին մնացորդները զոհեր տալով

<sup>26</sup> В. Ходжабекия, Б. Асатрян. Из истории армянского насе-  
ления Нахичевана. — «Вестник общественных наук» АН АрмССР, 1988,  
№ 6, с. 26.

<sup>27</sup> Ա. Վարդանյան. Ազնաբերդ: Նախիջևանահայության վերջին ամրո-  
ցը, Երևան, 2000, էջ 6:

<sup>28</sup> Հայաստանի Հանրապետություն, 21. XI. 2013:

զաղթեցին և վերաբնակվեցին հիմնականում Վայքի, Եղեգնաձորի, Արարատի, Արտաշատի, Մասիսի, Կոտայքի շրջաններում ու Երևանում:

Նախիջևանի հայկական հինավուրց հողը հայաթափվեց, հայկական բնիկ տարրը դուրս մղվեց՝ դրա ժողովրդագրական, սոցիալ-մշակութային, հասարակական-քաղաքական ասպեկտներով, ինչն այդ երկրամասի նկատմամբ իր իրավունքների վկայակոչման ազդեցիկ և անհավասարակշռության կողմից օգտագործվող հիմնական փաստարկն է:

Նախիջևանը հայաթափելուց հետո և Արցախյան շարժման ծավալմանը զուգահեռ երկրամասը, ուր նկատելիորեն մեծացել էր թուրքական ազդեցությունը, սկսեց օգտագործվել Հայաստանի դեմ: Դեռևս 1989 թ. վերջին Նախիջևանի ազդեցիկ բնակչությունը սկսեց զանգվածային կերպով ավերել խորհրդա-իրանական սահմանային ամրությունները և անցնել Իրանի տարածք: Ակնհայտ էր, որ այս քայլով Նախիջևանը տարածաշրջանային խնդիրներում օգտագործվում էր որպես խաղաքարտ, որին լրացնելու եկավ 1990 թ. հունվարի 19-ին Նախիջևանի ԻՍՄՀ ԳԽ արտակարգ նիստում ընդունված որոշումը՝ հանրապետությունը ԽՍՀՄ կազմից դուրս հայտարարելու վերաբերյալ: Հատկանշական է, որ Նախիջևանն անկախ հայտարարվեց «1921 թ. Կարսի պայմանագրի դրույթների համաձայն, տարածքային ամբողջականության և բնակչության զանգվածային սպանությունները կանխելու նկատառումներով»՝ օգնության խնդրանքով դիմելով ՄԱԿ-ին, Թուրքիային, Իրանին և այլ պետությունների: Ակնհայտ էր, որ դեռևս ԽՍՀՄ փլուզման շեմին Նախիջևանը վերածվել էր աշխարհաքաղաքական շահերի ազդեցության գոտու և տարածաշրջանային գործոնի, իսկ Թուրքիայի դեկավարությունն աներկբա բնորոշմամբ երկրամասը «պատուհան էր դեպի թուրքական աշխարհ»: Նախիջևանի, որպես Ինքնավար Հանրապետության (ՆԻՀ), «վերադարձը» Ադրբեջանի կազմ չի փոխել այդ երկրամասի հետ կապված աշխարհաքաղաքական ծրագրերը, որոնք բացահայտ ուղղված են Հայաստանի դեմ:

АРМЯНЕ В НАХИДЖЕВАНСКОЙ АССР В 1945—1988 ГГ.  
АЗЕРБАЙДЖАНСКАЯ ПОЛИТИКА ИЗЖИВАНИЯ И  
КУЛЬТУРНОГО ИСТРЕБЛЕНИЯ АРМЯН

ОВАННЕС АЛЕКСАНИЯН

Резюме

В Азербайджанской ССР десятилетиями проводилась политика нарушения прав, изживания и вытеснения армянского населения, в том числе из Нахиджеванской АССР. Власти, воспользо-

вавшись политикой сталинских репрессий, осуществляли расправу над государственно-партийными, общественно-культурными деятелями-армянами и простым народом. В постсталинский период Азербайджан продолжал целенаправленную политику по максимальному сокращению численности и окончательному вытеснению армян из Нахиджевана. К 1917 г. доля армян в общей численности населения Нахиджеванского уезда составляла свыше 40 % (54030 чел.). Под воздействием факторов антиармянской государственной политики численность армян Нахиджеванской АССР стала сокращаться, составив в 1959 г. 6.7% (9519 чел.), в 1970 г. 2.9% (5828 чел.), в 1979 г. 1.4% (3406 чел.), а в 1988–1989 гг. около 1%.

Последовательная политика, направленная на выселение армянского населения, сопровождалась уничтожением памятников истории и культуры армянского народа. Так, летом 1975 г. в г. Нахиджеване под предлогом строительства была разрушена церковь св. Ерродутюн (св. Троицы), основанная в VII в. Разрушаются также прекрасные творения армянских зодчих – церкви Апракуниса (X в.), Агулиса (IX–XII вв.), Мецопы (XII в.) и т. д. В октябре 1987 г. было уничтожено главное армянское кладбище Агулиса (около 400 средневековых надгробий с более чем 100 надписями, представляющими значительную историко-этнографическую ценность).

Насилие продолжалось и усилилось в период арцахского национального-освободительного движения. Заметно сократилось армянское население на территории Нахиджевана, и оно смогло организованно оказать сопротивление только в селе Азнаберд. Последняя часть нахиджеванских армян покинула край в декабре 1988 г. После распада СССР политика вандализма в отношении армянских памятников была доведена до конца.

ARMENIANS IN NAKHIJEVAN ASSR IN 1945–1988:  
THE AZERBAIJANI POLICY OF ETHNIC DEPOPULATION AND  
CULTURAL DESTRUCTION OF ARMENIANS

HOVHANNES ALEKSANYAN

Summary

The policy regarding the Armenian population of Azerbaijani SSR was the violation of rights, eradication and expulsion, including the Nakhijevan Autonomous republic, having been in use for decades. Making use of Stalinist repressions stage, a reprisal was carried out toward the statesmen,

Communist party members, public and cultural figures as well as against the ordinary people of Armenian nationality.

In post-Stalinist period Azerbaijan applied a purposeful policy on reducing the number in as much as possible and expelling definitely the Armenians from Nakhijevan. The percentage of the Armenians was making more than 40 % (54.030 persons) of the whole population of Nakhijevan district in 1917. The Armenians of Nakhijevan ASSR began to reduce in number, having been influenced by the factors of anti-Armenian public policy, making 6.7 % (9.519 persons) in 1959, 2.9 % (5.828 persons) in 1970, 1.4 % (3.406 persons) in 1979, and around 1% in 1988–1989.

The further policy, aimed at the expulsion of the Armenian population, was carried out along with the destruction of historical and cultural monuments of the Armenian people. Particularly, the church of Surb Yerrordutian (the Holy Trinity), built in the 7th c., was destroyed in Nakhijevan city under the pretext of construction in the summer of 1975. Besides, the wonderful monuments of the Armenian architects, that is the churches of Aprakunis (the 10th c.), Agulis (the 9th–12th c.), Metsop (the 12th c.) etc., were also destructed. The central cemetery of Agulis was destroyed in October 1987; approximately 400 medieval tombstones with more than 100 inscriptions of significant historical and ethnographic importance were also demolished.

The repressions were ongoing, having been intensified during the national-liberation struggle of Artsakh. The Armenian population was visibly reduced in number in the territory of Nakhijevan and they could show an organized resistance in the Armenian village of Aznaberd only. The last group of the Nakhijevan Armenians left the region in December 1988. The policy of vandalism regarding the Armenian monuments was implemented to the end after the fall of the USSR.